ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառամարման ԽՄ-ի

թիվ 1 նիստի

Ք. Չարենցավան, 21.02.2023

ԽՄ նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանը:

Նիստին ներկա էին ԽՄ անդամներ Աշոտ Ծերունյանը, Գայանե Աֆյանը, Արսեն Խլղաթյանը, Ալեքսանդր Վիրաբյանը, Գևորգ Հակոբյանը, Վարդան Գալեչյանը:

Նիստին ներկա չէին՝ Մարինե Հարությունյանը, Քրիստինե Ղազարյանը, Լուսինե Ծատուրյանը, Համլետ Խալաթյանը:

Նիստի սկզբում հաստատվեց օրակարգը և քննարկվեցին նրանում ներառված հարցերը՝ մասնավորապես Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի նախագծը:

ԽՄ անդամ Գևորգ Հակոբյանը նիստի սկզբում փորձեց ճշտել, թե նախորդ հնգամյա ծրագրի արդյունքում համայնքում ինչպիսի զարգացումներ են եղել: Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանը ներկայացրեց մի շարք դրական տեղաշարժեր, որոնք արձանագրվել են նախորդ 5 տարիների ընթացքում:

Համայնքապետարանի Զարգացման ծրագրերի և SS բաժնի պետ Աշոտ Ծերունյանը կետ առ կետ ներկայացրեց ծրագիրը:

Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգումների մասին խոսելիս ԽՄ անդամ Գևորգ Հակոբյանն առաջարկեց հետ վերադարձնել այն մանկապարտեզների շենքերը, որոնք ժամանակին տրվել են մասնավորին: Սևակ Վարդանյանը նշեց, որ նման խնդիր կա բոլոր համայնքներում, բայց դեռ չկա նման նախատիպ, բայց եթե հիմնանորոգվեն բոլոր առկա մանկապարտեզները, ապա նախադպրոցական կրթություն կստանան հերթում գտնվող բոլոր երեխաները: Աշոտ Ծերունյանն էլ նշեց, որ վերջին 15 տարում համայնքի բնակչության թիվը չի փոխվել, ուստի պետք է ձգտել նախ բնակչության թվի աճի, որից հետո նաև մտածել նոր նախադպրոցական հաստատությունների կառուցման կամ վերադարձման մասին:

ԽՄ անդամների կողմից եղան մի շարք առաջարկություններ, մասնավորապես՝

1. Կարենիսի «Քոչոյի աղբյուրի» տարածքի լուսավորություն

2. Համատիրությունների մասնակցությամբ ընդլայնված նիստի գումարում և խնդիրների քննարկում
3. Փողոցներում աղբամանների շատացում
4. Բացօթյա հանգստի գոտիների հետ աղբահանության պայմանագրերի կնքում
5. Աղբահանության ժամանակացույցերի կարգավորում
6. Փառատոնների կազմակերպում
7. Բնակչության պաշտպանունակությանը նպաստող միջոցառումներին աջակցություն
8. Բացօթյա լողավազանների վերագործարկման պիլոտային ծրագիր
9. Արզականի մանկապարտեզի 2 ճակատային մասերի վերանորոգում
10. Արզականի Նաիրի Զարյան փողոցում հենապատի կառուցում
11. Արզականի ոռոգման ջրի հարցի լուծում
12. Չարենցավան քաղաքի 10-րդ թաղամասի ասֆալտապատում

Համայնքի ղեկավարի տեղակալ Սևակ Վարդանյանը նշեց, որ բոլոր առաջարկությունները կընդունվեն: Որոնք հնարավոր է հրատապ լուծել, կլուծեն, որոնք երկարաժամկետ լուծում են պարունակում՝ կներառվեն հնգամյա զարգացման ծրագրում:

Արձանագրող՝

ԽՄ քարտուղար Սաթենիկ Բալաբեկյան